Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն
«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

*N 1-08/26-2*

*06.02.2026թ.*

***Լիցենզիա ՔՊԼ-001434***

***Լիցենզիա ՔՊԼ-001139***

**Պատվիրատու`** Ամասիայի համայնքապետարան

**Նախագծային կազմակերպություն`** «ԱՔԱՐԱ» ՍՊԸ

**Տնօրեն`** Ա. Հովհաննիսյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԴՊՐՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ Տ-7-8/Տ-7-37/-ԳՏԱՇԵՆ ԿԱՄԽՈՒՏ -/Տ-7-37ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀ ՏԱՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ /0,35ԿՄ/ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Երաշխավորվում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն բնակավայրի դպրոցից մինչև Տ-7-8/Տ-7-37/-Գտաշեն Կամխուտ -/Տ-7-37մարզային նշանակության ավտոճանապարհ տանող համայնքային նշանակության հատվածի /0,35կմ/ աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 83541.51 հազ. ՀՀ դրամ` ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ` Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2- Նախահաշիվ

__*Ճարտարապետաշինարարական մաս*__

Համաձայն ՇՄԱՀ-ԳԼԽԾՁԲ-15/23 պայմանագրի ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Տ-7-8, /Տ-7-37/-Գտաշեն-Կամխուտ-/Տ-7-37/ մարզային նշանակության ավտոճանապարհի տանող համայնքային նշանակության 0.35կմ ճանապարհահատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար <<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ մասնագետների կողմից տեղում կատարվել են տոպոգրական հանույթ և ուսումնասիրություններ :

Չափագրումներից պարզվեց որ վերանորոգվող հատվածում երթևեկելի մասի լայնություն Կ50+0.00-ից մինչև Կմ0+230 կազմել է 4.5մ, իսկ Կմ0+230-Կմ0+432 կազմել է 5.0-6.0մ :

Ուսումնասիրություններից պարզվեց, որ փողոցի երթևեկային մասի ասֆալտբետոնե ծածկ գոյություն չունի, առկա է խճային բնահողով իրականացված պատվածք 15-20սմ հաստության:

Գտաշեն գյուղում և նախագծվող փողոցի հատվածում մայթեր և կողնակներ իրականացված չկան:

Փողոցի նախագծով հատվածի երթևեկային մասի լայնությունը նախատեսվել է իրականցնել հետևյալ հարաչափերով երթևեկային մասը B 6.0մ, երկշերտ 2.75մ լայնությամբ և 0.25մ անվտանգության գոտիներով:

Ճանապարհային պատվածքի կոնստրուկցիան նախագծով նախատեսվել է իրականացնել հետևյալ ենթաշերտերով՝

- Մանրահատի ա/բ ծածկի վերին շերտ h=5սմ
- Խճային հիմքի շերտ h=15սմ, բիտումի տարածումով 4.12/1000մ
- Լրացուցիչ ավազակոպճային h=10սմ

Նախագծով նախատեսվել են իրականացնել միակողմանի մայթ 1.2մ լայնության, Կ50+0.00-ից մինչև Կ50+330 աջ կողմում, իսկ Կմ0+330 - Կ50+432 դպրոցի հարակից ձախ կողում:

- ❖ Ծածկը ավազային ա/բ h=3սմ
- ❖ Խճային շերտ h=12սմ

Մայթի և երթևեկային մասին հարակից եզրամասերում տեղադրվում են նոր բազալտե 15x30սմ եզրաքարեր միաձույլ բետոնե B15 հիմքի վրա:

Փողոցի որոշ տեղամասերի մայթերի արտաքին եզրամասերում, որոնք հարակցվում են կանաչ տարածքների հետ նույնպես տեղադրվում են միաձույլ բետոնե 10x20սմ եզրաշարեր:

Վերանորոգվող հատվածին հատվող և միացվող փողոցները, իջատեղերը նախագծով նախատեսված են հիմնանորոգել L=7-10մ երկարությամբ և 4.0-5.0մ լայնությամբ:

Նրբանցքերի երթևեկային մասի ճանապարհային պատվածքը իրականցվում է նույնպես հետևյալ ենթաշերտերով

- ❖ Մանրահատի ա/բ ծածկի վերին շերտ h=5սմ խճային հիմքի շերտ h=15սմ, բիտումի տարածումով 4.12տ/1000մ
- ❖ Լրացուցիչ ավազակոպճային h=10սմ

Նախագծով նախատեսվել է նաև որոշ հատվածներ իրականացնել լցովի B 0.75մ լայնության կողնակներ, մանրախճային ամրացված h-5սմ շերտով

Երթևեկային մասից մթնոլորտային տեղումների հոսքաջրերը հեռացվում են մակերևույթային եղանակով:

<u>Նախահաշիվ</u>

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման :
Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.47473 |
| - Մեքենաների շահագործում | 3.12879 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 09.2025թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1,088 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 267890 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև՝ | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ**-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ՝ Ա.Հարությունյան